Տեղեկանք գործող Օրենսգրքում լրացում կատարելու վերաբերյալ

Հոդված 150.10. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհները ոռոգման առուներով, կապի, էլեկտրականության գծերով, խողովակաշարերով կամ այլ հաղորդակցուղիներով, ավտոմոբիլային ճանապարհներով կամ երկաթուղային գծերով հատման, դրանց տեղադրման և վերատեղադրման կարգը խախտելը

1. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհները առանց պետական մարմնի հետ համաձայնեցնելու ոռոգման առուներով, կապի, էլեկտրականության գծերով, խողովակաշարերով կամ այլ հաղորդակցուղիներով, ավտոմոբիլային ճանապարհներով կամ երկաթուղային գծերով հատելը, օտարման շերտում դրանց տեղադրելը կամ վերատեղադրելը՝

առաջացնում են տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ՝ միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մասով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհինսնապատիկի չափով, իսկ հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մասով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհները ոռոգման առուներով, կապի, էլեկտրականության գծերով, խողովակաշարերով կամ այլ հաղորդակցուղիներով, ավտոմոբիլային ճանապարհներով կամ երկաթուղային գծերով հատման, օտարման շերտում դրանց տեղադրման կամ վերատեղադրման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգը կամ տեխնիկական պայմանները խախտելը, բացառությամբ սույն հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մասով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, իսկ հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մասով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինսնապատիկի չափով:

3. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհի հողային պաստառի վրայով, բացի տեխնոլոգիական կապից և լուսավորումից, որևէ հաղորդակցուղի տեղադրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մասով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհինսնապատիկի չափով, իսկ հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մասով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

4. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտի սահմաններում հողային (շինարարական) աշխատանքների կատարման հետևանքով վնասված հողապաստառի, կահավորանքի, տեխնոլոգիական կապի նախկին տեսքը չվերականգնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մասով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, իսկ հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մասով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

5. Սույն հոդվածով նախատեսված արարքները վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով սահմանված տուգանքի կրկնապատիկի չափով:

(150.10-րդ հոդվածը լրաց. 01.03.18 ՀՕ-142-Ն)

Հոդված 150.11. Միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների անվտանգության, սպասարկման, պահպանման և օգտվելու համար ներկայացվող սահմանափակումները, պայմանները և պահանջները խախտելը

1. Միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին՝ մինչև 200 մետր հեռավորության վրա գտնվող շենքերում կամ շինություններում, որոնք չեն համապատասխանում՝ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների անվտանգության, սպասարկման, պահպանման և օգտվելու համար ներկայացվող սահմանափակումներին, պայմաններին և պահանջներին, սգո սրահի՝ քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման կամ մատուցման համար թույլտվության տրամադրումն առաջացնում է տուգանք՝
պաշտոնատար անձի կողմից կատարվելու դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով: